ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 2
N ՇՀԾՁԲ-7/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **20 .12.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Աբելյան ԴՁ» ԲԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Պապոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 15.04.2014թ. կնքված N ՇՀԾՁԲ-7/7-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում 1222 լրակազմ «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակը մատակարարելու համար նախատեսել կանխավճար՝ 4 020 380 (չորս միլիոն քսան հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով, ընդ որում, Պատվիրատուն սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 2 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Կատարողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ մատուցվող ծառայությանը համամասնորեն:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Աբելյան ԴՁ» ԲԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Լոռու մարզ, գ. Շիրակամուտ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ Սպիտակ մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510021930930100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 06801252
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Մ. ՊԱՊՈՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/13–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/7» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի ապրիլի 15-ին կնքված N ՇՀԾՁԲ-7/7-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայամանգրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրում նախատեսել կանխավճար:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում 1222 լրակազմ «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակը մատակարարելու համար նախատեսել կանխավճար՝ 4 020 380 (չորս միլիոն քսան հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով, ընդ որում, Պատվիրատուն սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 2 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Կատարողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ մատուցվող ծառայությանը համամասնորեն:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: